



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2008թ. հունվարին /վերլուծություն/

2008թ. հունվարին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 9245 գործարքներ, որոնց քանակը 2007թ. հունվարի համեմատ աճել է 9.0%-ով, իսկ 2007թ. դեկտեմբերի համեմատ նվազել 42.5%-ով:

2008թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2008թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2008թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3816 օտարման գործարքների 87.0% կազմել են առուվաճառքները, 12.2%՝ նվիրատվությունները և 0.9%՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 29.0%

արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 29.1% հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2008թ. հունվարին, 2007թ. դեկտեմբերի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակը նվազել է 35.9%-ով, իսկ 2007թ. հունվարի համեմատ՝ 1.4%-ով:

2008թ. հունվարին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 57.1% արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2007թ. դեկտեմբերի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 48.7%-ով, իսկ 2007թ. հունվարի համեմատ աճել՝ 0.2%-ով:

2008թ. հունվարին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	հունվար 2007թ.	հունվար 2008թ.	դեկտեմբեր 2007թ.
Կենտրոն	415200	475100	474100
Արաբկիր	324000	379300	378400
Քանաքեռ-Զեյթուն	226900	298400	297800
Նոր-Նորք	199500	254400	253900
Ավան	186600	256200	255700
Էրեբունի	204200	260500	254800
Շենգավիթ	214600	270000	264000
Դավթաշեն	222700	277500	276900
Աջափնյակ	198000	260600	260100
Մալաթիա-Սեբաստիա	189200	255200	254700
Նուբարաշեն	117600	142900	138400
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	227100	284600	282600

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2008թ. հունվարին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2007թ. դեկտեմբերի համեմատ աճել են 0.7%-ով:

2008թ. հունվարին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 375 բնակարաններ, որոնց քանակը 2007թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 32.1%-ով, իսկ 2007թ. հունվարի համեմատ՝ 5.1%-ով:

2008թ. հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հունվար 2007թ.	հունվար 2008թ.	դեկտեմբեր 2007թ.
Արագածոտն	Աշտարակ	88000	112500	112300

	Ապարան	28000	31000	30900
	Թալին	32000	40500	40400
Արարատ	Արտաշատ	69000	91200	90300
	Մասիս	78306	116700	116300
	Վեդի	52000	74400	74200
	Արարատ	51000	58500	58200
Արմավիր	Վաղարշապատ	109000	149700	149500
	Արմավիր	77000	109600	109200
	Մեծամոր	50000	69500	69300
Գեղարքունիք	Սևան	51000	76800	76600
	Գավառ	31000	41100	41000
	Մարտունի	46000	61900	61300
	Վարդենիս	25000	29300	29200
	Ճամբարակ	13900	15600	15600
Լոռի	Վանաձոր	62100	81900	81400
	Ստեփանավան	31500	44300	43400
	Մայիսակ	42300	59000	57200
	Ալավերդի	23300	27900	27800
	Տաշիր	22000	29000	29000
	Թումանյան	5400	5500	5500
	Շամլուղ	3000	3200	3200
Կոտայք	Աբովյան	126048	156900	156400
	Նոր Հաճն	86000	113900	113700
	Բյուրեղավան	60000	86500	84900
	Եղվարդ	80000	106300	106000
	Հրազդան	44000	59800	59600
	Ծաղկաձոր	80600	129400	114000
	Չարենցավան	52000	76200	74500
Շիրակ	Գյումրի	60166	87900	84300
	Արթիկ	40000	50600	48900
	Մարալիկ	23800	26000	25900
Սյունիք	Գորիս	61300	89100	85500
	Կապան	56500	79000	75500
	Սիսիան	47400	62600	60300
	Մեղրի	35300	44100	44000
	Ագարակ	23000	27700	27600
	Քաջարան	29700	41600	40600
	Դաստակերտ	6800	7000	7000
Վայոց Ձոր	Վայք	54000	69700	69300
	Եղեգնաձոր	63400	88900	88800
	Զերմուկ	92000	118000	115000
Տավուշ	Դիլիջան	58000	82200	79000
	Իջևան	77000	109600	105800
	Բերդ	33000	37400	37300
	Նոյեմբերյան	26000	29100	29100
	Այրում	18000	21000	21000

2008թ. հունվարին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2007թ. դեկտեմբերի համեմատ աճել են 1.7%-ով:

2008թ. հունվարին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 467 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 122, մյուս մարզերում միասին վերցրած՝ 345: 2007թ. դեկտեմբերի համեմատ անհատական

բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 31.3%-ով, ընդ որում Երևանում՝ 39.0%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 28.1%-ով: 2007թ. հունվարի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը աճել է 16.5%-ով, ընդ որում Երևանում՝ 71.8%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 4.6%-ով:

2008թ. հունվարին Երևան քաղաքի համայնքներում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

Համայնքներ	Միջին գները /դրամ/		
	հունվար 2007թ.	հունվար 2008թ.	դեկտեմբեր 2007թ.
Կենտրոն	417000	484100	480100
Արաբկիր	334100	391300	391100
Քանաքեռ-Զեյթուն	232600	305900	302800
Նորք-Մարաշ	203100	258600	251800
Ավան	188700	263200	262000
Էրեբունի	206000	263400	258200
Շենգավիթ	216200	272500	267200
Դավթաշեն	224500	286400	282600
Աջափնյակ	200500	266700	264700
Մալաթիա-Մեքաստիա	191400	264400	259600
Նուբարաշեն	120500	145500	141700
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	230400	291100	287400

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2008թ. հունվարին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2007թ. դեկտեմբերի համեմատ աճել են 1.3 %-ով:

2008թ. հունվարին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները /դրամ/		
		հունվար 2007թ.	հունվար 2008թ.	դեկտեմբեր 2007թ.
Արագածոտն	Աշտարակ	89800	116800	116600
	Ապարան	29700	34100	34000
	Թալին	33600	43400	43200
Արարատ	Արտաշատ	71000	96800	96400
	Մասիս	82400	121200	119400
	Վեդի	54800	78300	76300
	Արարատ	53700	63500	63400
Արմավիր	Վաղարշապատ	111400	153500	151800

	Արմավիր	79400	114000	112800
Գեղարքունիք	Սևան	52700	80200	78400
	Գավառ	33000	44300	42800
	Մարտունի	48100	65600	63400
	Վարդենիս	27900	31400	31200
	Ճամբարակ	15900	19100	19000
Լոռի	Վանաձոր	65000	86900	85500
	Ստեփանավան	34200	47500	46900
	Սպիտակ	44300	61300	59200
	Ալավերդի	25300	30300	30200
	Տաշիր	23900	31700	31100
	Թումանյան	7300	9000	8900
	Շամլուղ	4800	6000	6000
	Ախթալա	12800	15200	15100
Կոտայք	Աբովյան	128900	162200	160900
	Նոր Հաճն	88500	119200	118200
	Բյուրեղավան	62300	90300	86900
	Եղվարդ	82700	111300	110900
	Հրազդան	46200	63900	63100
	Ծաղկաձոր	87000	191200	181400
	Չարենցավան	54100	79300	76500
Շիրակ	Գյումրի	62300	91900	89800
	Արթիկ	42000	52400	51400
	Սարալիկ	25900	29500	29200
Սյունիք	Գորիս	63500	91500	87800
	Կապան	59100	81900	78600
	Սիսիան	49600	64900	62700
	Մեղրի	37500	47500	46700
	Ագարակ	25000	30000	29500
	Դաստակերտ	9000	9900	9900
Վայոց Ձոր	Վայք	55900	73500	72000
	Եղեգնաձոր	65700	94500	92800
	Ջերմուկ	42900	67800	66000
Տավուշ	Դիլիջան	60300	85800	83400
	Իջևան	79000	112000	107700
	Բերդ	34900	39600	39200
	Նոյեմբերյան	27800	34700	34600
	Այրում	19200	22800	22800

2008թ. հունվարին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/ 2007թ. դեկտեմբերի համեմատ աճել են 2.0%-ով:

Ընդհանուր առմամբ, 2008թ. հունվարին հանրապետությունում օտարվել են 1651 միավոր /1288.52 հա/ հողեր, որից Երևանում` 104 միավոր /13.87 հա/, այդ թվում ՀՀ հողային օրենսգրքի փոփոխության 23-րդ հոդվածի համաձայն, օտարվել են 49 միավոր /18.23 հա/ հողեր, որից Երևանում` 30 միավոր /5.26 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր` 744 միավոր /1187.86 հա/, որից Երևանում` 5 միավոր /0.46 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր` 583 միավոր /48.47 հա/, որից Երևանում` 58 միավոր /3.99 հա/,

- հասարակական կառուցապատման հողեր՝ 281 միավոր /23.47 հա/, որից Երևանում՝ 38 միավոր /8.03 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 34 միավոր /20.89 հա/, որից Երևանում՝ 3 միավոր /1.40 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 5 միավոր /6.44 հա/,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր 1 միավոր /1.30 հա/,
- տրանսպորտի օբյեկտների հողեր՝ 3 միավոր վարձակալության իրավունքի վաճառք /0.10 հա/:

2008թ. հունվարին հանրապետությունում օտարված հողերից 1561 միավորի /1260.13 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 92 միավոր /12.46 հա/, նվիրատվության գործարքներ՝ 81 միավորի /26.23 հա/, որից Երևանում՝ 10 միավոր /0.94 հա/ և փոխանակության գործարքներ՝ 9 միավորի /2.16 հա/, որից Երևանում՝ 2 միավոր /0.47 հա/:

Հանրապետությունում 2008թ. հունվարին, 2007թ. հունվարի համեմատությամբ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 16.4%-ով: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 24.7%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել՝ 9.1%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել՝ 88.9%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 514.40 հա, որից 507.20 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 44.2% կամ 690 գործարքներ /614.57 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 34 գործարքներ /6.75 հա/, իսկ 55.2% կամ 862 միավորը /640.59 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 56 միավոր /5.16 հա/: 2008թ. հունվարին հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 9 գործարք /4.96 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքներ:

Ստորև ներկայացվում է 2008թ. հունվարին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունը ըստ մարզերի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները:

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	<i>Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող</i>								<i>Մասնավոր սեփականություն հանդիսացող</i>							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	3	1.40	12	0.84	19	4.51	4	0.39	0	0.00	39	2.80	13	1.98
Արագածոտն	82	147.96	2	0.09	12	1.23	18	0.34	46	119.51	0	0.00	36	3.77	1	0.005
Արարատ	34	52.56	5	2.08	52	4.08	39	2.12	85	40.72	1	0.06	71	5.69	2	0.58
Արմավիր	42	234.29	2	0.30	7	0.70	24	0.36	86	272.92	0	0.00	71	5.77	3	0.07

Գեղարքունիք	4	2.00	0	0.00	9	0.76	15	1.97	5	5.28	0	0.00	12	1.13	2	0.48
Լոռի	1	0.26	1	0.05	2	0.14	12	3.13	45	16.89	0	0.00	5	0.53	3	0.02
Կոտայք	50	94.99	5	4.42	16	1.46	45	2.40	134	95.77	3	0.32	106	9.29	1	0.33
Շիրակ	1	0.40	2	1.03	18	0.46	13	0.26	13	10.26	0	0.00	9	1.05	0	0.00
Սյունիք	3	4.51	5	6.40	9	0.80	12	0.28	14	12.03	0	0.00	8	0.41	1	0.04
Վայոց Ձոր	9	22.35	2	0.07	17	1.56	17	0.13	1	17.00	0	0.00	3	0.13	2	0.41
Տավուշ	13	3.91	3	4.67	25	1.64	27	1.16	18	9.44	0	0.00	13	1.32	3	1.31
Ընդամենը	239	563.23	30	20.51	179	13.67	241	16.66	451	600.21	4	0.38	373	31.89	31	5.23

Ստորև ներկայացվում է 2008թ. հունվարին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունը ըստ մարզերի և ըստ հողերի տեսակների, բացառությամբ առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների հողերի.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյունաբ. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ.		հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի		բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	21	5.35	3	1.40	4	0.04	14	3.91	13	1.40	0	0.00	0	0.00	8	0.80	5	0.60
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	114	149.62	82	147.96	2	0.09	12	1.23	18	0.34
Արարատ	6	0.36	1	0.26	2	0.09	3	0.01	123	57.49	33	49.56	4	1.82	50	4.00	36	2.11
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	72	233.62	39	232.26	2	0.30	7	0.70	24	0.36
Գեղարքունիք	1	0.003	0	0.00	0	0.00	1	0.003	27	4.73	4	2.00	0	0.00	9	0.76	14	1.97
Լոռի	2	0.05	0	0.00	0	0.00	2	0.05	14	3.54	1	0.26	1	0.05	2	0.14	10	3.09
Կոտայք	7	0.27	0	0.00	1	0.02	6	0.25	109	103.00	50	94.99	5	4.42	15	1.44	39	2.15
Շիրակ	2	0.05	0	0.00	1	0.03	1	0.02	32	2.11	1	0.40	2	1.03	17	0.44	12	0.24
Սյունիք	3	6.08	1	6.05	0	0.00	2	0.03	26	5.91	3	4.51	4	0.35	9	0.80	10	0.25
Վայոց Ձոր	1	0.004	0	0.00	0	0.00	1	0.004	44	24.11	9	22.35	2	0.07	17	1.56	16	0.13
Տավուշ	2	0.05	0	0.00	2	0.05	0	0.00	66	11.33	13	3.91	3	4.67	23	1.59	27	1.16
Ընդամենը	45	12.22	5	7.71	10	0.23	30	4.28	640	596.86	235	558.20	25	12.80	169	13.46	211	12.40

Հանրապետությունում 2008թ. հունվարին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 4 գործարք /5.03 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2008թ. հունվարին 2007թ. հունվարի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 35.5%-ով: Ընդ որում Երևանում նվազել է 38.1%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած նվազել՝ 35.5%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 44.2%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել՝ 47.7%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել՝ 4.5%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել՝ 2.5 անգամ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2008թ. հունվարին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	70	127.49	35.9	782.4	151.1	36	109.18	362.2	6772.5	2998.4
Ապարան								90.6	767.6	394.8
Թալին	12	20.46	37.6	51.0	45.9	9	7.66	90.6	758.5	424.5
Ծաղկահովիտ						1	2.68	77.0	948.2	184.6
Արարատի մարզ										
Արտաշատ	6	15.77	32.4	1043.7	537.7	32	13.04	335.1	5418.0	1581.0
Մասիս	17	19.44	30.8	1597.5	491.6	17	6.67	181.1	6772.5	2014.8
Վեդի	10	14.35	35.7	2552.3	445.5	35	20.69	203.8	4515.0	1402.2
Արմավիրի մարզ										
Արմավիր	4	1.95	410.0	2158.3	1009.4	35	22.04	294.3	4063.5	1009.9
Բաղրամյան	25	160.33	33.8	802.5	172.2	12	235.61	90.6	677.3	623.8
Վաղարշապատ	10	69.98	33.8	2352.0	1264.0	38	14.92	443.7	9030.0	1776.9
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						2	0.41	190.2	496.7	396.2
Ճամբարակ	3	1.86	196.4	1080.0	597.5			45.3	541.8	161.2
Մարտունի						2	2.00	45.3	1806.0	485.3
Սևան								45.3	451.5	207.5
Վարդենիս	1	0.14	2541.0	2541.0	2541.0	1	2.87	27.2	532.8	271.3
Լոռու մարզ										
Ալավերդի	1	0.26	1155.0	1155.0	1155.0	28	9.55	163.0	2483.3	1142.3
Գուգարք								226.4	2709.0	970.2
Սպիտակ						5	1.07	226.4	1490.0	541.1
Ստեփանավան						2	3.00	90.6	2257.5	397.3
Տաշիր						10	3.27	45.3	451.5	217.1
Կոտայքի մարզ										
Աբովյան	20	44.55	35.5	1260.9	271.2	47	51.15	271.7	11287.5	3695.6
Եղվարդ	22	40.14	54.3	1303.5	345.2	78	36.44	172.1	11287.5	2606.2
Հրազդան	8	10.30	61.3	517.5	158.8	9	8.18	113.2	2709.0	1032.4
Շիրակի մարզ										
Ախուրյան						9	7.79	249.0	1693.1	470.6
Ամասիա								36.2	237.0	120.0
Անի						4	2.46	108.7	361.2	260.1
Աշոցք								45.3	165.0	118.5
Արթիկ	1	0.40	105.0	105.0	105.0			63.4	1083.6	180.8
Սյունիքի մարզ										
Գորիս						8	5.05	90.6	673.3	358.2
Կապան	2	4.00	190.0	190.0	190.0	3	3.54	54.3	841.6	236.2
Մեղրի	1	0.51	138.6	138.6	138.6	1	0.12	181.1	1784.2	518.4
Սիսիան						2	3.32	45.3	631.2	250.1
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	7	19.10	94.4	601.2	289.9	1	17.00	117.7	2524.8	1328.2
Վայք	2	3.25	69.0	208.0	138.5			54.3	1430.7	521.3
Տավուշի մարզ										
Բերդ	9	1.64	147.1	550.0	350.6	2	0.22	45.3	841.6	374.3
Իջևան	4	2.27	146.7	2970.0	1261.5	1	3.00	240.0	1683.2	838.8

Նոյեմբերյան						15	6.22	45.3	3509.5	568.8
-------------	--	--	--	--	--	----	------	------	--------	-------

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը պայմանավորված է հողերի տեղադրությամբ, հողատեսքերով, որակական հատկանիշներով և գների վրա ազդող այլ գործոններով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2008թ. հունվարին բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/			Միավորների քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	2	2840.0	2517.5	2517.8	2517.7	34	33364.0	113.2	3612.0	2420.8
Ապարան	10	9500.0	115.0	115.0	115.0			113.2	632.1	206.8
Թային						2	4320.0	45.3	361.2	103.1
Ծաղկահովիտ								45.3	361.2	69.8
Արարատի մարզ										
Արտաշատ	8	6953.0	145.0	441.0	354.0	15	13360.0	135.8	2709.0	915.5
Մալիս	16	14315.0	276.4	1539.4	745.3	36	23868.0	135.8	9030.0	1196.4
Վեդի	26	18687.0	183.6	1088.9	488.6	20	19677.0	113.2	993.3	663.2
Արմավիրի մարզ										
Արմավիր						24	21255.0	135.8	2257.5	1168.2
Բաղրամյան								81.5	270.9	141.0
Վաղարշապատ	7	7000.0	693.0	693.0	693.0	45	34595.0	135.8	4515.0	1521.5
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	5	4300.0	115.0	115.0	115.0	4	2550.0	135.8	903.0	364.7
Ճամբարակ								45.3	135.5	99.8
Մարտունի						6	6690.0	90.6	451.5	260.3
Սևան	4	3300.0	410.1	1140.6	789.2	1	600.0	90.6	903.0	162.1
Վարդենիս						1	1450.0	45.3	225.8	116.7
Լոռու մարզ										
Ալավերդի						3	2660.0	67.9	270.9	136.5
Գուգարք						1	2033.0	67.9	2347.8	570.0
Սպիտակ						1	560.0	63.4	451.5	132.2
Ստեփանավան	2	1400.0	277.0	277.2	277.1			45.3	270.9	109.9
Տաշիր								45.3	135.5	68.1
Կոտայքի մարզ										
Աբովյան	2	2000.0	270.0	410.0	340.0	49	42827.0	135.8	6772.5	1905.8
Եղվարդ	1	200.0	845.2	845.2	845.2	54	46897.0	135.8	6772.5	2018.5
Հրազդան	12	12200.0	383.0	413.3	395.5	3	3130.0	135.8	9030.0	1311.6
Շիրակի մարզ										
Ախուրյան	13	2548.0	291.7	6000.0	2331.7	6	7340.0	113.2	1535.1	330.8
Ամասիա								45.3	135.5	68.5
Անի								67.9	180.6	98.6
Աշոցք								40.8	135.5	58.1
Արթիկ	4	1840.0	279.3	286.8	282.3	3	3145.0	67.9	925.6	172.5
Սյունիքի մարզ										
Գորիս	1	1250.0	176.0	176.0	176.0	5	2544.0	67.9	541.8	243.7
Կապան	5	5000.0	34.0	34.0	34.0	1	720.0	67.9	632.1	206.3

Մեղրի	3	1725.0	278.3	278.3	278.3	2	870.0	67.9	406.4	125.8
Միսիան								67.9	406.4	141.5
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր	17	15550.0	177.8	773.3	450.1	2	990.0	67.9	1128.8	305.2
Վայք						1	324.0	77.0	632.1	121.4
Տավուշի մարզ										
Բերդ						1	400.0	45.3	632.1	86.7
Իջևան	23	15945.0	55.0	2518.4	1334.4	10	9303.0	67.9	1354.5	434.2
Նոյեմբերյան						2	3480.0	45.3	632.1	138.1

2008թ. հունվարին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել է նախկինում անհատույց սեփականաշնորհման 1 գործարք /3.00 հա մակերեսով/ Շիրակի մարզում:

2008թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 836 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 9.0%: Ընդ որում, վարձակալության գործարքների 12.7% իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2008թ. հունվարին 2007թ. դեկտեմբերի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 33.0%-ով, իսկ 2007թ. հունվարի համեմատ աճել՝ 12.7%-ով:

2008թ. հունվարին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 49 բնակարանների, 30 անհատական բնակելի տների, 369 հասարակական, 27 արտադրական նշանակության օբյեկտների, 352 միավոր /1387.47 հա/ հողերի և 8 ավտոտնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2008թ. հունվարին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 47 վարձակալության գործարքների /այդ թվում 18 միավոր /2.30 հա/ կառուցապատման իրավունքով/ քանակը 2007թ. դեկտեմբերի համեմատ մնացել է անփոփոխ, իսկ 2007թ. հունվարի համեմատ աճել՝ 2.9 անգամ:

2008թ. հունվարին հանրապետությունում վարձակալված 1387.47 հա հողերից 6.43 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 1381.04 հա հողերի 20.94 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Սյունիքի մարզում՝ 512.11 հա, որից 492.86 հա գյուղատնտեսական նշանակության: Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 304.00 հա հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2008թ. հունվարին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի	
	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /միավոր/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	0	0.00	37	140.76
Արարատ	4	129.00	50	114.39
Արմավիր	0	0.00	1	0.40
Գեղարքունիք	3	175.00	23	89.04

Լոռի	0	0.00	1	0.02
Կոտայք	0	0.00	23	37.50
Շիրակ	0	0.00	63	125.42
Սյունիք	0	0.00	10	492.86
Վայոց Ձոր	0	0.00	2	25.40
Տավուշ	0	0.00	0	0.00
Ընդամենը	7	304.00	210	1025.79

2008թ. հունվարին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 987 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 10.7%: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2007թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 65.0%-ով, իսկ 2007թ. հունվարի համեմատ աճել՝ 18.5%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /47.9%/, առանձնատների /26.3%/, հասարակական նշանակության օբյեկտների /8.6%/ և հողերի /14.4%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 360 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2007թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 65.1%-ով, իսկ 2007թ. հունվարի համեմատ աճել՝ 3.4%-ով:

2008թ. հունվարին հանրապետությունում գրավադրվել են 184.98 հա հողեր, որից 9.19 հա՝ Երևանում: Ընդ որում հողերի 93.4% կամ 172.82 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 95.36 հա, որից 95.14 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2008թ. հունվարին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 116 գործարքներ, որից 58-ը՝ Երևանում: Ընդ որում հիփոթեքային գրավադրման գործարքներից 50.9%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակականների, 32.8%-ն՝ անհատական բնակելի տների, 8.6%-ը՝ հողերի նկատմամբ:

2008թ. հունվարին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման համապատասխանաբար 4 և 7 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.1%: 2007թ. դեկտեմբերի համեմատ մասնավորեցման գործարքների քանակը նվազել է 50.0%-ով, իսկ 2007թ. հունվարի համեմատ աճել՝ 2.8 անգամ: 2008թ. հունվարին մասնավորեցման գործարքներն արձանագրվել են. 5-ը՝ Երևանում, 2-ական՝ Գեղարքունիքի, Կոտայքի և 1-ական՝ Շիրակի, Սյունիքի մարզերում:

2008թ. հունվարին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1391 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2007թ. դեկտեմբերի համեմատ նվազել է 45.1%-ով, իսկ 2007թ. հունվարի համեմատ՝ 14.3%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 15.0%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /33.1%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն